

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

(2016/2017 ուստարի)

(Կատարված է Երևանի պետական համալսարանի
հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կողմից)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Կրթական ծրագրի մշտադիտարկումը որակի ապահովման ներբուհական գործընթաց է, որի նպատակն է գնահատել ծրագրի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանված նպատակներին ու չափանիշներին: Մշտադիտարկման վերջնարդյունքը ծրագրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների պլանի կազմումը և իրականացումն է:

1.2. Մշտադիտարկման խնդիրներն են.

- Գնահատել ծրագրի սահմանված նպատակներին հասնելու և ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերման ընթացքը,
- Գնահատել ուսուցման արդյունավետությունը, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների համապատասխանությունը ծրագրի պահանջներին,
- Բացահայտել և վեր հանել ծրագրի թերություններն ու իրականացման դժվարությունները, ուժեղ ու թույլ կողմերը:

2. Ծրագրերի մշտադիտարկումը

2.1. Դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիր

ԵՊՀ-ում 2011 թվականից կրեդիտային համակարգով իրականացվող պրոֆեսորա-դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիրը բազմափուլ գործընթաց է: 1-ին փուլն իրականացվել է 2011 -2016թթ.: 2-րդ փուլում (2016-2021թթ.) կատարելագործվել են ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը՝ պայմանավորված ԵՊՀ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Առաջին փուլում ծրագիրն ավարտվել է դասախոսների անհատական ամփոփիչ ատեստավորմամբ: Շուրջ 900 դասախոսից ծրագիրը լիարժեքորեն ավարտել է 560-ը: Այս փուլում բացահայտվեց, որ դասախոսների որոշակի հատված օտարված է գիտական գործունեությունից. շուրջ 130 դասախոս չէր ներկայացրել որևէ գիտական աշխատանք: Այս առումով խոստն է ծրագրի կրթական և հետազոտական կրեդիտների հարաբերակցությունը՝ 58% և 40%:

Հաշվետու ժամանակաշրջանում (2016/2017 ուստարի) սկսվել է ծրագրի երկրորդ փուլի իրականացումը: Վերջինիս հիմնարար փաստաթղթերը՝ ծրագիրը և

կանոնակարգը, հաստատվել են գիտխորհրդի կողմից: Դրանք ուղղված են մի շարք խնդիրների լուծմանը.

1. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացումը դարձնել շարունակական գործընթաց:
2. Վերացնել առաջին փուլում ի հայտ եկած թերացումները:
3. Հաշվի առնելով փորձագետների ու համալսարանականների առաջարկությունները՝ լավագույնս համադրել ծրագրի պարտադիր ու կամրնտրական բաղադրիչների հարաբերակցությունը:

Վերոնշյալ նպատակով **բազմազանեցվել է ծրագրի կառուցվածքը, ստեղծվել է ծրագրային հարուստ բազա՝** ունկնդիրներին առաջարկելով շուրջ 500 մասնագիտական և ընդհանուր պատրաստության դասընթացներ:

Ծրագիրն ունի պարտադիր և կամրնտրական բաղադրիչներ: Առաջին փուլի վերլուծությունը հարկադրեց երկրորդ փուլում **պակասեցնել պարտադիր բաղադրիչի չափաքանակը:** Երկրորդ փուլում պարտադիր է միայն 2 կրթական բաղադրիչ՝ անգլերենը և մասնագիտական մեկ դասընթաց:

Որոշ **դասընթացներ տարբերակվեցին** փորձառու և սկսնակ դասախոսների համար: Օրինակ՝ «Դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքները» պարտադիր է դարձել միայն սկսնակ դասախոսների համար:

Ընթացիկ ծրագրի մշտադիտարկումը վեր է հանում ամենամտահոգիչ իրողությունը՝ **կրթական ոչ բավարար վերջնարդյունքները:** Օրինակ՝ «Առցանց ուսուցման դասընթացի» 33 ունկնդրից միայն 3-ն է լիարժեքորեն օգտագործում իր իսկ ստեղծած հեռավար դասընթացի նյութերը: Մինչդեռ նրանցից յուրաքանչյուրին տրվել է 3 կրեդիտ՝ ակնկալելով ավելի լավ արդյունքներ: Այս դասընթացի վերջնարդյունքները դեռ չափելի են, իսկ մի շարք դեպքերում դրանց գնահատումն օբյեկտիվ չէ, քանզի գործընկեր դասախոսները (դասավանդող - ունկնդիր) բավականին բարեհաճ են իրար նկատմամբ:

Մտահոգիչ է նաև **մասնագիտական պատրաստության խնդիրը:** Առաջին փուլում «Մասնագիտության արդի հիմնախնդիրները» դասընթացի բովանդակությունը ոչ միշտ էր համապատասխանում անվանմանը և, ամենակարևորը, նպատակին: Սա է պատճառը, որ երկրորդ փուլում հստակ չափանիշներ են ներկայացված բոլոր դասախոսների համար պարտադիր այս դասընթացին: Բայց ֆակուլտետների՝ դասընթացն սկսելուց խույս տալը նշանակում է, որ իրավիճակը փոխելն այնքան էլ հեշտ չէ:

Որակավորման բարձրացման ծրագրի երկրորդ կառուցամասը՝ դասախոսների հետազոտական-ուսումնամեթոդական գործունեությունը խթանելու նպատակով **ավելացվել են վերջինիս բաղադրիչներին տրվող կրեդիտները:** Դասախոսների հետազոտական մոտիվացիան խթանող հանգամանք է նաև որակավորման

բարձրացման ծրագրի և լրավճարների հատկացման կարգի մի շարք դրույթների փոխհամաձայնեցումը:

Որակավորման բարձրացման ծրագրի իրականացմանը զուգընթաց ծագում է մի կարևոր հարց ևս՝ **դասախոսների ձեռք բերած հմտությունները առավել ակտիվորեն ներառել կրթական գործընթացում:**

Ծրագրի իրականացման 2016/17 ուստարվա արդյունքները վկայում են, որ **ակտիվ է դասախոսական կազմի կեսը**. կազմակերպված դասընթացների մասնակցել է շուրջ 450 դասախոս (1266 ունկնդիր): Մյուս կեսը կրավորական դիրքորոշում ունի:

Նշված թերությունների բացահայտումը և դրանց հաղթահարումը պահանջում են մշակել և իրականացնել ծրագրի բարելավմանն ուղղված միջոցառումներ: Դրան են ուղղված դասընթացների վերահսկողության ուժեղացումը, ունկնդիրների հարցումների՝ նոր ձևաչափով անցկացումը և յուրաքանչյուր դասընթացի համար նախատեսված ստուգարքը հատուկ թեստերով ավարտելը:

2.2. Մասնագիտական վերապատրաստման կրթական ծրագրեր

Լրացուցիչ կրթության երկրորդ ծրագիրը մասնագիտական վերապատրաստումն է՝ երկու ենթածրագրով: Առաջին ենթածրագրով հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է պետական կառույցների՝ ՀՀ ԱԺ և ՀՀ ՊՆ աշխատակիցների, ինչպես նաև ՀՀ քաղձառայողների վերապատրաստում (500 ունկնդիր՝ 9 ծրագրով):

Հաշվետու ժամանակաշրջանում թարմացվել են վերապատրաստման դասընթացների ուսումնական պլանները և ծրագրերը՝ վերջիններս համապատասխանեցնելով ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման պահանջներին: Ուզում եմ նշել կարևոր մի հանգամանք: ԵՊՀ-ն նշված ծրագրերը մշակում և իրականացնում է պատվիրատուների հետ սերտ համագործակցությամբ: Բերեմ մեկ օրինակ: ՀՀ ՊՆ-ի հետ համատեղ մշակվել է «Ռեզերվային հոգեբանություն» ծրագիրը, որով վերապատրաստվում են ՀՀ Զինված ուժերի սպա-հոգեբանները: ԵՊՀ և Հայոց բանակի համագործակցությունը հարստացել է նորագույն դրսևորումով: Թեմատիկ հազեցվածությամբ ծրագիրն ամփոփվեց համատեղ կոնֆերանսով, որին ակտիվորեն մասնակցել են և՛ ՀՀ ՊՆ ներկայացուցիչները, և՛ ԵՊՀ ու ներգրավված այլ բուհերի դասախոսները: Ընթացքի մեջ է նաև համապատասխան ուսումնական ձեռնարկի հրատարակումը:

ՀԼԿ վարչության կողմից իրականացվող մասնագիտական վերապատրաստման ծրագրերը հիմնականում հասցեագրված են ՀՀ հանրային ծառայողներին: Պատվիրատու գործընկերներն են ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ պաշտպանության նախարարության և ՀՀ քաղձառայության խորհրդի աշխատակազմերը: 15-ամյա համագործակցության ընթացքում ստեղծվել են սերտ գործընկերային կապեր, ԵՊՀ-ն վերապատրաստող կազմակերպությունների շարքում ունի կայուն բարձր

կարգավիճակ: Այդ են վկայում ոչ միայն քաղճառայողների հետոսարնթացային բազմամյա պարտադիր հարցումները, այլև պատվիրատուների պահանջով կատարվող վերլուծությունները: Իրականացվում են նաև համատեղ քննարկումներ և սեմինարներ, որոնց նպատակն է բացահայտել վերապատրաստման խնդիրները, լուծել դրանք և բարձրացնել ուսուցման որակը:

2016/2017 ուսումնական տարում մասնագիտական վերապատրաստման դասընթացների մշտադիտարկումը վեր է հանել հետևյալ պատկերը:

Վերապատրաստման գործընթացն ունի երեք փուլ՝ վերապատրաստման կարիքների նախնական գնահատում, դասընթացների մշակում ու կազմակերպում և քաղճառայողների կրթական վերջնարդյունքների գնահատում: Կարիքների նախնական գնահատումը ԵՊՀ-ին չի վերաբերում: Ըստ «Քաղճառայողների վերապատրաստման կարգի»՝ վերապատրաստման գործընթացի անմիջական պատասխանատուն համապատասխան պետական մարմնի աշխատակազմի ղեկավարությունն է: Այնուամենայնիվ, հաշվի առնելով ԵՊՀ-ի՝ հանրային ծառայողների վերապատրաստման 15-ամյա փորձը՝ ՀԼԿՎ-ն պարբերաբար առաջարկներ է ներկայացնում քաղճառայողների կրթական կարիքների գնահատման վերաբերյալ:

2016/2017 ուստարում ՀԼԿՎ-ն լուրջ աշխատանք է կատարել հանրային ծառայողների ուսումնական ծրագրերը լրամշակելու, դասախոսական կազմը համալրելու և ուսումնամեթոդական բազան հարստացնելու առումով: Դասընթացների ավարտից հետո ունկնդիրներին էլեկտրոնային ձևով ուղարկվում են ծրագրային բոլոր նյութերը՝ կրթությունը ինքնուրույն շարունակելու և բաց թողած դասերը լրացնելու նպատակով:

Մշակվել է երկու նոր ծրագիր («ՀՀ միջազգային ինտեգրացումը. հեռանկարներ և մարտահրավերներ», «Հաղորդակցումը ժամանակակից հասարակական գործընթացներում»), լրամշակվել են գործող ծրագրերը:

Պատվիրատուները հաճախ ներկայացնում են նեղ մասնագիտացման ծրագրերի պահանջ, ինչը, ցավոք, չենք կարողանում բավարարել (աուդիտորական գործունեություն, հաշվապահական հաշվառում և այլն)՝ համալսարանական բավարար կադրեր չունենալու պատճառով:

Վարչությանը հաջողվել է այս տևական ժամանակահատվածում ի մի բերել ԵՊՀ դասախոսական լավագույն ներուժը միջազգային հարաբերությունների, կառավարման հոգեբանության, հաղորդակցման, գործավարության և այլ ոլորտներում՝ հարկ եղած դեպքում ընդգրկելով նաև հրավիրյալ դասախոսների: Բարձրորակ դասախոսական կազմը, սակայն, չի ծածկում մի շարք թերություններ:

Առաջինը՝ վերապատրաստվող խմբերը ձևավորվում են պատվիրատուների կողմից, որոնք, զարմանալիորեն, շահագրգիռ վերաբերմունք չեն դրսևորում՝ շատ

հաճախ **հավաքագրելով անհամասեռ խումբ**. աշխատակազմի ղեկավարի տեղակալի հետ նույն դասընթացին մասնակցելու է հրավիրվում առաջատար մասնագետը, կամ՝ ֆինանսիստները գործուղվում են հաղորդակցության դասընթացին, ինչը նպատակին չի ծառայում:

Երկրորդ՝ դասախոսական կազմը, որքան էլ հմտացել է վերապատրաստման գործում, այնուամենայնիվ մնում է ակադեմիական կրթության շղթաներում: Ըստ արժանվույն գնահատելով դասախոսներին՝ ունկնդիրները, այնուամենայնիվ, բողոքում են գործնական հմտություններ ձեռք չբերելուց: Նպատակահարմար կլիներ, եթե ՀՀ քաղծառայության խորհուրդը հնարավորություն ստեղծեր իրագործելու **վերապատրաստողների վերապատրաստում և միաժամանակ համապատասխան ծրագրերի մշակում**:

Ի մի բերելով հանրային ծառայողների վերապատրաստման դասընթացներում առկա թերությունները՝ նախատեսում ենք ծրագրերում **տեսական և գործնական գիտելիքների հարաբերակցությունը փոխել հոգուտ վերջինի՝** դասավանդողներին պարտավորեցնելով ներկայացնել համապատասխան ծրագրեր և նյութեր:

Պետք է նաև նշել, որ **մաշվել է վերապատրաստման բազան**. ստեղծման օրվանից լսարանները չեն նորոգվել, սեղան-նստարանները չեն փոխվել, հատակն այնքան մաշված է, որ անհարմար ենք զգում ունկնդիրներ ընդունելիս: Իսկ ՀՀ քաղծառայության խորհուրդը նախատեսում է անցնել մասնակի հեռավար ուսուցման, ինչը նոր պահանջներ է դնելու բուհերի առջև:

Մասնագիտական վերապատրաստման երկրորդ ենթածրագիրը բացում է համալսարանի դռները ֆիզիկական անձանց առջև, քանզի լրացուցիչ կրթության նպատակներից մեկը հասարակայնության հետ կապերի ապահովումն է: Վերջինիս հիմնական դրսևորումներից մեկը **«Գործնական հոգեբանություն» դասընթացն է**, որի ունկնդրակազմը վկայում է ծրագրի բազմանպատակայնությունը: Դասընթացին մասնակցում են բժիշկները՝ հարստացնելու իրենց մասնագիտական գիտելիքները հոգեբանական հմտություններով, ֆիզիկական անձինք, որոնք վերափոխվող հասարակական հարաբերություններում հոգեբանական պաշտպանության կարիք ունեն: Այս ոլորտում ԵՊՀ-ի հարուստ փորձն էր, որ հնարավոր դարձրեց ստանձնել սպա-հոգեբանների վերապատրաստման դժվարին և պատասխանատու գործը:

Նման ծրագրերի պակասի հիմնական պատճառը **լրացուցիչ կրթության փաստաթղթերի չճանաչումն է** պետության և, բնականաբար, գործատուների կողմից: Որքան էլ կատարյալ լինի ծրագիրը, ընտրյալ՝ դասախոսը, ունկնդիրն էլ լավ սովորի, միևնույն է, նրա ավարտական փաստաթուղթը որևէ մեկի կողմից լուրջ չի ընդունվում: Բոլոնիայի գործընթացի ընդլայնումը, զանազան սեմինարների և հանդիպումների կազմակերպումը լրացուցիչ կրթությանը ճանաչում չեն բերի: Համակարգի զարգացումը պիտի դառնա պետության, գործատուների և բուհերի համընդհանուր խնդիրը: Ուսանողական համակազմի պակասը, բնակչության տարեց

հատվածի ավելացումը և նրան կրթությունը նորացնելու հնարավորություն տալը պիտի մտահոգեն բոլորին:

Աշխատաշուկայում մասնագետներին ներկայացվող պահանջների փոփոխությունները, լրացուցիչ կրթական ծրագրերի որակի ապահովումը և վերապատրաստող հաստատությունների մրցակցությունը անհրաժեշտ են դարձնում ԵՊՀ-ում գործող լրացուցիչ կրթական ծրագրերի պարբերական մշտադիտարկումը: 2016/2017 ուսումնական տարում իրականացված մշտադիտարկման արդյունքում ամբողջությամբ կամ մասնակիորեն լրամշակվել են վարչության լրացուցիչ կրթական ծրագրերը՝ և՛ բովանդակային, և՛ կադրային ապահովման առումով:

Հոկտեմբեր 2017